Վերապատրաստման դասընթաց «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործի քննության արդի հիմնահարցերը» թեմայով

14.09.2026 11:36

Հարգելի՛ փաստաբաններ,

15.09.2026թ. ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի դատական նիստերի դահլիճում կազմակերպելու է վերապատրաստման դասընթաց **«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործի քննության արդի հիմնահարցերը (ՄԻԵԴ-ի դատական կազմերը, ՄԻԵԴ ներկայացված գանգատի կոմունիկացիա, վիճաբանության և ոչ վիճաբանության փուլեր, հաշտության համաձայնության կնքումը և դրան հաջորդող փուլերը)»** թեմայով:

Միաժամանակ հայտնում ենք, որ հրավիրված դասընթացին կարող եք մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին պարտադիր անհրաժեշտ է նշել գրանցման վերաբերյալ Ձեր նամակում:

Ուշադրություն. Հաշվի առնելով հեռավար եղանակով դասընթացներին մասնակցել ցանկացողների թվաքանակը և Google meet հավելվածի միջոցով դասընթացի կազմակերպման ժանրաբեռնվածությունը, հեռավար եղանակով դասընթացին կարող են մասնակցել առաջին 100 գրանցվողները:

- Դասընթացը կվարի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ Դիանա Քարագյանը:
- **Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 15.09.2026թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը, ինչպես նաև դասընթացին մասնակցելու ձևաչափը:**
- **15.09.2026թ. ժամը 12:00-ից հետո և առանց դասընթացի թեմայի, անվան, ազգանվան, արտոնագրի համարի, ձևաչափի նշման, հեռավար մասնակցության գրանցումները չեն հաշվարկվելու,**
- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Ուշադրություն. Հեռավար դասընթացը կանցկացվի Google meet հավելվածի միջոցով, որի մասնակցության հրավերը կստանաք ձեր էլեկտրոնային փոստի հասցեին՝ գրանցվելուց հետո մինչև 15.09.2026 թվականը ժամը 18:00-ն:

Միաժամանակ խնդրում ենք հարթակին միանալիս նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը՝ Ձեր մասնակցությունը հաշվառելու և հարթակում շփվելու համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })